09/10/14թ-ից մինչև 09/10/19թ.
ամսական 50,0 ընդամենը 600000

09.10.2014թ.
327

Գործարքի կոդ: 590-20141009-37-167341
Գործարքի ծածկագիր: OLROB3

## ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՎԱՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ՝ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, մարզ Գեղարքունիք, քաղաք Սևան, երկու հազար տասնչորս թվականի հոկտեմբերի իննին

ՎԱՐՁԱՏՈՒ՝ «ԱՐԱ-ՆԱՆԵ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ՀՎՀՀ՝ 08405125, Պետ. ռեգիստրի գրանցման համար՝ 25.110.00449, ի դեմս՝ ՉԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ ԱՐՏԱԿ-ի,անձնագիր AE0523464 տրված ,,ՀԾՀ 1912760150,հասցե ՄԱՐԶ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ՔԱՂԱՔ ԳԱՎԱՌ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ 19 ՏՈՒՆ , այսուհետ՝ ՎԱՐՁԱՏՈՒ, մի կողմից, և

ՎԱՐՁԱԿԱԼ՝ «ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱՐԿԸ, ՀՎՀՀ՝ 01223338, Պետ. ռեգիստրի գրանցման համար՝ 271.0094 , այսուհետ՝ ՎԱՐՁԱԿԱԼ, մյուս կողմից, որի անունից 26 սեպտեմբերի 2014 թվականին տրված թիվ 2243 լիազորագրով հանդես է գալիս՝ ՌՈԲԵՐՏ ՀԱԿՈԲԻ ՄԻՆԱՍՅԱՆԸ ծնված՝ 10/03/1979թ., անձնագիր՝ AK0503503 տրված 003-ի կողմից 13/05/2010-ին, ՀԾՀ՝ 2003790055, հաշվառված՝ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ, ՇԵՆՔ 14 (ՏԱՍՆՉՈՐՍ), ԲՆԱԿԱՐԱՆ 57 (ՀԻՍՈՒՆՅՈԹ) , միասին այսուհետ՝ ԿՈՂՄԵՐ, փոխհամաձայնությամբ, ԿՆՔԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն պայմանագրով ՎԱՐՁԱՏՈՒՆ պարտավորվում է վճարի դիմաց ՎԱՐՁԱԿԱԼԻ ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սույն Պայմանագրի 1.2 կետում նշված անշարժ գույքը՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ յուրաքանչյուր ամիս 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ վարձավճարով, որպես գրասենյակ օգտագործելու նպատակով,:

1.2.Վարձատուն պարտավորվում է վարձակալին հանձնել հետևյալ անշարժ գույքի՝ մարզ Գեղարքունիք, քաղաք Գավառ, Կենտրոնական հրապարակ թիվ 4 (չորս) հասցեում գտնվող <<ԽԱՂՂ>> հյուրանոցի երրորդ հարկի թիվ 307 և 309 սենյակները՝ ընդհանուր 45,9 քառակուսի մետր (քառասունհինգ ամբողջ ինը) մակերեսով ոչ բնակելի տարածքը, այսուհետ՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ, որի փոխանցման հանձնման ակտը կազմում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

1.3. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ սեփականության իրավունքով պատկանում է ՎԱՐՁԱՏՈՒԻՆ համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գեղարքունիքի տարածքային ստորաբաժանման Գավառ սպասարկման գրասենյակի կողմից 15 հոկտեմբերի 2003թ. տրված թիվ 1662402 սեփականության իրավունքի գրանցման վկայականով:

1.5. Սույն պայմանագրի 1.2. կետում նշված ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ կամ, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված չէ, դատական վեճի առարկա չէ. գրավի տակ է <<ՅՈՒՆԻԲԱՆԿ>> փակ բաժնետիրական ընկերության Գավառի մասնաճյուղում համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ԳԱՎԱՌ սպասարկման գրասենյակի կողմից 29 սեպտեմբերի 2014թ. տրված թիվ US-29092014-05-0009 միասնական տեղեկանքով, <<ՅՈՒՆԻԲԱՆԿ>> ՓԲԸ-ի Գավառի մասնաճյուղը 07 հոկտեմբերի 2014թ. թիվ 1296 գրությամբ չի առարկել, որպեսզի գրավադրված անշարժ գույքից թիվ 307 և 309 սենյակները տրվեն վարձակալությամբ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությանը՝ պայմանով, որ Կողմերը ռադարեցնեն վարձակալության պայմանագիրը և ազատեն տարածքը 30 օրվա ընթացքում <<Յունիբանկ>> ՓԲԸ-ի, սույն պայմանագիրը դադարեցնելու մասին առաջին իսկ գրավոր պահանջ ներկայացնելու դեպքում, վարձակալած գույքը ենթավարձակալության ռամանց թույլատրել միայն <<Յունիբանկ>> ՓԲԸ-ի համաձայնությամբ, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության կողմից վճարվող ամսական գումարը

փոխանցվելու է <<Յունիբանկ>> ՓԲԸ-ում <<ԱՐԱ-ՆԱՆԵ>> ՍՊԸ-ի հաշվին :

1.6. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ օգտագործվելու է որպես գրասենյակ:

1.7. Վարձակալության հանձնված ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոխելու համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարձատուն իրավունք ունի `

2.1.1. Պահանջել վարձակալից ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և անշարժ գույքի նշանակությանը համապատասխան:

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը:

2.1.3. Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե վարձակալը ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան:

2.2. Վարձատուն պարտավոր է `

2.2.1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ վարձակալին հանձնել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.

2.2.2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ վարձակալին հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով .

2.2.3. Վարձակալին նախազգուշացնել ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին:

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1.Պահանջել վարձատուից սույն պայմանագրի 5.1. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ:

2.3.2.Վարձատուից պահանջել իրեն տրամադրել ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը:

2.3.3.ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերությունները հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

2.3.3.1.Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու գույքի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը:

2.3.3.2.Վարձատուին նախապես տեղեկացնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը.

2.3.3.3.Սույն Պայմանագրի պայմանների խախտման դեպքում վաղաժամկետ լուծել պայմանագիրը:

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. Ժամանակին վճարել ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ օգտագործելու համար նախատեսված վճարը (վարձավճարը) և տվյալ գույքի ու դրա օգտագործման համար նախատեսված բոլոր անհրաժեշտ վճարումները:

2.4.2. Պայմանագիրը դադարեցնելու դեպքում վարձատուներին վերադարձնել ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ իր

կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով դրա բնական մաշվածությունը:

2.4.3. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ պահպանել պատշաճ վիճակում. կրել գույքը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը:

2.4.4. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սույն Պայմանագրի պայմանները կիրառվում են Կողմերի միջև 01 մայիսի 2014 թվականից ծագած հարաբերությունների նկատմամբ, ուստի Վարձակալը պարտավորվում է Վարձատուին վճարել նախորդ ամիսների պարտքը, որը կազմում է 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, վճարումը կատարվելու է մինչև 05 նոյեմբերի 2014 թվականը՝ ներառյալ:

3.ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

3.1. Վարձավճարի չափը կազմում է յուրաքանչյուր ամսվա համար 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, որը չի ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային պարտավորությունները: Վարձակալը վարձավճարը պարտավոր է վճարել հաջորդ ամսվա 05-ը ներառյալ, անկանխիկ եղանակով, Վարձատուի նշած հաշվեհամարին, այն է <<Յունիբանկ>> ՓԲԸ-ում <<ԱՐԱ-ՆԱՆԵ>> ՍՊԸ-ի հաշվին:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1.Եթե վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ,ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարը լիովին չի ծածկում Վարձատուին պատճառված վնասները, նանք կարող են պահանջել հատուցելու դրանց չծածկված մասը:

4.2.Վարձատուն պատասխանատվություն չի կրում ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ այն թերությունների համար, որոնք նրանք նշել են սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել վարձակալին կամ պետք է վարձակալի կողմից հայտնաբերվեին ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ զննելիս կամ Գույքը վարձակալության հանձնելիս ստուգելիս:

4.3.Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վարձակալից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի նկատմամբ 0,5 տոկոսի չափով:

4.4.Սույն պայմանագրով նախատեսված ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ հանձնման ժամկետի խախտման համար վարձատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա գումարի 0,5 տոկոսի չափով:

4.5.Սույն պայմանագրով նախատեսված՝ վարձատուի նկատմամբ հաշվարկված տույժերը, տուգանքները հաշվարկվում են և հաշվանցվում են վարձատուների վճարման ենթակա գումարից:

4.6.Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.7.Տուգանքի և տույժի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

4.8. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ վավերացված նոտարական կարգով, համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում պետական գրանցման պահից և գործում է մինչև 09 հոկտեմբերի 2019թ. (երկու հազար տասնինը թվականի հոկտեմբերի ինը):

## 6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

6.1.Վարձատուի պահանջով սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե վարձակալը՝

6.1.1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով:

6.1.2 .էականորեն վատթարացել է ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ վիճակը.

6.1.3. Սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամ ավելի չի մուծել վարձավճարը.

6.1.4. խախտել է պայմանագրով նախատեսված որևէ էական պահանջ:

6.2. Սույն պայմանագիրը կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի վաղաժամկետ դադարեցնել՝ լուծել, պայմանագրի մյուս կողմին նախապես մեկ ամիս առա-ջ գրավոր ծանուցելով պահելով:

## 7.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է ՀՀ Համապատասխան դատարանի քննությանը:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունքը, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն. որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3/երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Սույն Պայմանագիրը կազմված է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, օրինակներից մեկը պահվում է Սևան նոտարական տարածքի նոտարի գործերում, մնացած օրինակները տրվում են Կողմերին, բնօրինակ է համարվում Նոտարի մոտ պահվող օրինակը:

9.2. Սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 աշխատանքային օրվա ընթացքում:

9.3. Պայմանագրի տեքստը նոտարի կողմից ընթերցվեց բարձրաձայն, Պայմանագրի բովանդակությունը, էությունը, նշանակությունը, իրավական հետևանքները ԿՈՂՄԵՐԻ համար պարզ է և հասկանալի:

ՎԱՐՁԱՏՈՒ՝

<<ԱՐԱ-ՆԱՆԵ>> ՍՊԸ, ՀՎՀՀ08405125, գտնվելու վայրը՝ քաղաք Գավառ, Կենտրոնական հրապարակ 4, տնօրեն՝ ԱՐՏԱԿ ՍԱՄՎԵԼԻ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ<

ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AE0523464, տրված՝ 040-ի կողմից 11 հուլիսի 2000թ., հաշվառված՝ մարզ Գեղարքունիք, քաղաք Գավառ, Միքայելյան փողոց, թիվ 19

Արման Գասպարյան

ՎԱՐՁԱԿԱԼ՝

ՀՀ Արդարադատության Նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, լիազորված անձ՝ ՌՈԲԵՐՏ ՀԱԿՈԲԻ ՄԻՆԱՍՅԱՆ, ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AK0503505, տրված՝ 003-ի կողմից 13 մայիսի 2010թ., հաշվառված՝ քաղաք Երևան, Բագրատունյաց փողոց, շենք 14, բնակարան 57

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԻՆՆԻՆ,

սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ ՍԵՎԱՆ նոտարական տարածքի նոտար՝ Արմինե Սամվելի Բեջանյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, իրավունակությունը, լիազորված անձի լիազորությունները, իրավաբանական անձնանց իրավունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունակությունը ստուգված են: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 աշխատանքային օրվա ընթացքում: Իմ կողմից վավերացված սույն պայմանագիրը ունի օրենքով նախատեսված հանրային հեղինակություն և լիարժեք ապացուցողական ուժ:

Գրանցված է սեղանամատյանում N 2805 - ով:

Գանձված է պետական տուրք 5000 դրամ և ծառայության վճար 15000 դրամ համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Նոտար Արմինե Սամվելի Բեջանյան



2/2 - ?

Պայմանագրի կողմ
Կատարող <Արա-Նանե>ՍՊԸ
Հասցե ք.Գավառ Կենտրոն,հրապարակ 4
Հ/Հ 24134000050400
ՀՎՀՀ 08405025

Հաստատված
ՀՀ ֆինանսների նախարարի
2015թ-ի ապրիլի 1-ի N 179-Ն հրամանի

Պատվիրատու
ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Հասցե Հալաբյան 41ա
Հ/Հ 900011288025
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 01223338

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
## ՀԱՆՁՆՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

<30> <Դեկտեմբեր> 2016թ
Պայմանագրի/այսուհետ՝ Պայմանագիր/անվանումը
Տարածքի վարձակալություն

Պայմանագրի կնքման ամսաթիվը < 09 > < 10 > 2014 թ.
Պայմանագրի համարը՝ 2805
Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ գլխավոր հարկադիր կատարող Ա. Հարությունյանի և Պայմանագրի կողմը ՝ ի դեմս <Արա-Նանե> ՍՊԸ տնօրեն Ա.Զանգեզուրյանի ______ հիմք ընդունելով ___ Պայմանագրի կատարման վերաբերյալ <__> <_> 201 թ. Կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված ստորև նշված մատակարարումները, Աշխատանքները կամ ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրերի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքներ՝

Մատակարարված աշխատանքների,կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների

| Անվանումը | Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Քանակական ցուցանիշը | | Կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը | Վճարման ժամկետը Ըստ Վճարման ժամանակացույցի |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ըստ Պյմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Ըստ Պյմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| Տարածքի վարձակալություն | | 1 ամիս | 1 ամիս | դեկտեմբեր | դեկտեմբեր | 50000 | |
| Ընդամենը | | | | | | 50000 | |

Վերոհիշյալ մատակարարումների, աշխատանքների կամ ծառայությունների կատարման կամ մատուցման վերաբերյալ Բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

(ստորագրություն)

Աշխատանքը հանձնեց

(ստորագրություն)